



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

ՀԻՏՈՒ ԶԻՒԳՈ

Ա Յ Ր

Ն Ի

ՈՒՐԻՉ ԶՐՈՅՑՆԵՐ



Թարգմ.

ՊԳ ԲԱՐՈՒՐԵԱՆՑ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

4
-66

1904

1870

1

1870

1870

1870

1870

1870

20 APR 2006

19 NOV 2010

1898
84
3-66



Մ Ա Յ Ր Ը

Ե Ի

Ո Ի Բ Ի Ը Զ Բ Ո Յ Ց Ն Ե Բ


1002
5142



Թարգմ. Գեորգ Բարսուբեանց


Թ Ի Փ Լ Ի Ս

Տպար. Թաւարթ-ըրիւձէի, Գաղ. Ա. Մահտեսի-Յակոբեան
Սերգէական փող. № 1
1904



Մ Ա Յ Ր Է

(Վիկտոր Հիլգոփ)



ըղեօք ունիք մայր: Գիտէք ինչ է նշանակում լինել թշւառ, թոյլ, խղճուկ, անտէր երեսիւյ, և զգալ, թէ ձեզ մօտ և ամենայն տեղ ձեզ հետ կայ մի կին, որ գնում է՝ երբ դուք էք գնում, կանգ է առնում՝ երբ դուք էք կանգ առնում, ժպտում է՝ երբ դուք լալիս էք: Կին... օ, ոչ, նա աւելի շուտ հրեշտակ է: Նա ձեզ սովորեցնում է խօսել, ծիծաղել և սիրել: Նա տաքացնում է ձեր մատները իր ձեռքերի մէջ, ձեր մարմինը իր ծնկների վրայ, ձեր հոգին իր սրտի մէջ: Նա ձեզ տալիս է իր կաթը՝ երբ դուք

Дозволено цензурою. 1 Мая, 1904 г. г. Тифлисъ.

փոքր էք, իր հացը՝ երբ դուք մեծանում էք, և իր հոգին՝ երբ դուք այդ ցանկանաք: Հրեշտակ է նա, որին դուք ասում էք «մայրիկ», և որը ձեզ պատասխանում է «գաւալկրս» մի այնպիսի քաղցրահամբոյր, սիրալիք ձայնով, որ այդ մի խօսքը կատարեալ հաճոյք է պատճառում Աստծուն:

Ես էլ ունէի մի այնպիսի մայր: Նա մի թշուառ կին էր, որ հրապարակներում երգելով՝ չարքաշ կեանք էր վարում, ողորմութիւն էր հաւարում: Ես ուղեկցում էի նրան: Մեզ շարտում էին մի քանի սև դրամներ: Նրա երգերից մէկը, որ նա երգում էր առանց իմաստը հասկանալու, իր մէջ պարունակում էր մի քանի վիրաւորական խօսքեր՝ նոյն քաղաքի մի հարուստ անձնաւորութեան հասցէին ուղղւած: Ամբոխը կանգնւած էր և ծիծաղում էր: Այդ իսկ ըոպէին մօտովըն անցնում էր իշխանը. նա ուշադրութեամբ լսում էր երգի խօսքերը, նայեց մօրըս և ասաց իր հետ եկող մարդուն.

— Կախեցէք այս կնւջը:

Մօրս իսկոյնեթ կալանաւորեցին: Նա լուռ գրկեց ինձ, նրա արցունքի խոշոր կաթիլներն ընկան ճակատիս վրայ. ապա նա

բնրցրեց իր ունեցած «Խաչելութեան պատկեր» և թոյլ տուց իրան կապել, կապկրպել: Մինչև այժմս էլ կրկին աչքիս առաջըն է այդ պատկերը: Իմ անունը մեծ-մեծ տառերով փորագրւած է նրա վրայ սուր դանակի բերանով: Այն ժամանակ ես վեց տարեկան էի: Անշարժ, ապշած, սպանւածի նման ես նայում էի թէ ինչպէս կապկրպում էին իմ մայրիկին, վշտիցս անկաբող լինելով խօսել, լալ և աղաղակել: Ամբոխը նոյնպէս ուռ էր:

Իշխանի մօտ մի աղջիկ կար, որ գնում էր նրա հետ: Նա անշուշտ նրա դուստրն էր: Մօրս ողբալի դրութիւնը տեսնելով՝ նրա սիրտը կարեկցութեամբ լցուց: Խեղճ աղջիկը ծնկաչոր ընկաւ իշխանի առաջ և այնպէս լալիս էր ու աղաղակում, որ վերջապէս հասաւ իր նպատակին, այն է մայրիկիս կեանքը փրկել կարողացաւ սոսկալի բախտից: Երբ մայրս արդէն ազատ էր, վերցրեց իր «Խաչելութեան պատկեր» տուց այն աղջկան և ասաց:

— Օրիորդ, պահեցէք այս պատկերը. նա ձեզ բախտաւորութիւն կը բերի:

Մի քանի տարուց յետոյ մայրս վախ-

ճանւեց. ժամանակով ես բաւական հարըստացայ. բայց ես չեմ մոռացել և շատ լաւ յիշում եմ այդ աղջկան, այդ հրեշտակ, մօբըս կեանքը փրկող բարեսիրտ աղջկան: Ո՛վ գիտէ, գուցէ նա անբախտ է այժմ և կարօտ իմ օգնութեան:

Երբ ես գնում եմ որևէ քաղաք գործի կամ թէ զբօսնելու՝ միշտ հարց ու փորձ եմ անում նրա մասին այնտեղի ոստիկաններից, պատմում եմ նրանց իմ պատմութիւնը, ասելով, որ առանց մի բռայէ, մի վայրկեան իսկ դանդաղելու պատրաստ եմ տասը հազար ֆռանկ տալ այն մարդուն, որ կըզտնէ իմ մօբս ազատարար հրեշտակին:

Ես յոյս ունիմ նրան գտնել, եթէ միայն նա չէ մեռած:



ԳՐՔԵՐԻ ԱՇԽԱՐՀ

(ԾՅՆԿԵԱՆ ԳՐՈՅ)

Նատալիա ֆօն Էշտորուտի

Հասաւ ծննդեան տօնի երեկոն:
—Աստղը վայր ընկաւ,—ասում էին
մարդիկ:

Սակայն աստղը չէր այդ: Դա ծննդեան հրեշտակն էր, որ երկնքից երկիր իջաւ: Նա հանդարտիկ թռչում էր տների վրայով և նայում պատահանների միջով. ուզում էր իմանալ թէ մարդիկ ինչ են ցանկանում: Եւ նրան լսելի եղան բազմազան ցանկութիւններ:

Մի պատահանի առաջ նստած էր մանկահասակ աղջիկը և նայում էր կապտացող երկնքին:

—Ա՛խ, ինչպէս կըցանկայի առաջուց

իմանալ թէ ինչ է սէրը,— շնչում էին նրա վարդապոյն շրթունքները: Ծնողներս չեն կարող պարզել իմ առաջ այդ գեղեցիկ հանելուկը, և աշխարհումս ոչ ոք չի կարող հասկանալի կերպով պատմել ինձ այդ մասին:

Ծննդեան հրեշտակը ժպտաց և շարունակեց իր թռիչքը:

Ի որբորւած գլուխը ձեռքին յենած՝ պատանին նստած էր պատուհանի մօտ:

— Աղքատութիւնն ինձ փակւած, կաշկանդւած է պահում իմ տանս, այս փորքիկ գիւղաքաղաքում, սակայն հոգիս ինձ դէպի հեռուն է քարշում, — գանգատում էր նա: Ա՛խ, ինչպէս կուզէի ազատ լինել, տեսնել ուրիշ վայրեր, ուրիշ մարդիկ, նայել լայնատարած աշխարհի վրայ: Ի՛նչպէս են այնտեղ ապրում: Ի՛նչ է դա: Երանի թէ մի որեէ հայելու մէջ աշխարհիս իսկական կեանքը տեսնել կարողանայի:

Հրեշտակը շարունակ հեռուն էր թռչում:

Մի սենեակում, դէմքը լարձի մէջ թաքցրած՝ պառկած էր հիւանդ կինը և տընքում էր:

— Ա՛խ, երանի թէ կարողանայի տան-

ջանքներս մոռանալ... Երանի թէ կարողանայի՝ առաջւայ պէս՝ նորից ծիծաղել և ուրախ լինել...

— Ես այսպէս մենակ... — ասում էր մի ուրիշը. — Ինչ, Արարիչ Աստուած, այս անմութիթարական օթեանս ինձ համար մարդիկ ուղարկիր, որոնց ես կարողանայի սիրել...

Հրեշտակը տխրամած՝ թռաւ մօտովը: Գարձեալ մի վերջին պատուհանում ճրագ էր երևում:

Այնտեղ մի մարդ նստած՝ գրում էր, գրում, շարունակ գրում: Նրա գլխի վրայ մի պայծառ լոյս էր փայլում: Այդ նրա հանձարի բոցավառ լոյսն էր: Գրողի շուրջը բազմաթիւ գրքեր էին թափւած, բոլորն էլ նրա տաղանդի արտագրութիւններ...

Հրեշտակը գոհ էր. նա գտաւ իր ցանկացածը:

Նա վերցրեց այդ գրքերը և օրհնաբանելով նրանց, շաղ տեց այն ամենտեղերը, ուր տօնածառերն էին վառում: Այդ գրքերն աստղերի նման տարածւում էին ամենուրեք և ամենի ցանկութիւններին էլ կատարումն էին բերում: Աղջիկը տրոփացող


սրտով նրանցում կարգաց սիրոյ հրաշալի օրհներգը: Իրողի հանճարեղ միտքը պատանուն ցոյց տւեց ամբողջ աշխարհը, բոլոր մարդկանց և նրանց կեանքը: Հիւանդը, կարդալով, արցունքի միջից ժպտում էր և մոռացաւ իր տանջանքները: Մենակեացը դադարեց մենակ լինելուց. նրա օթևանում բնակւելու եկան չքնաղ տեսիլներ, որոնց նա սիրեց:

Պօէտը կանգնած էր տօնածառի մօտ՝ ձեռքերը ծալած և երջանիկ ժպիտը դէմքին: Իրքերը տարածեցին նրա սրտաբուրդիս բարեմաղթութիւնները, և այդ գրքերի էջերը թերթողների համար նրանք հնչում էին մեղմիկ, բայց պարզ ու որոշ:



ԾԱՂՐԱԾԻՒ ԱՌԱՍՊԵՆՆԵՐԸ

(Կաղանդի նորակէպ)



ը նախարարների հետ միասին արքան քէֆ անելով էր դիմաւորում նոր ծարուն: Նա երիտասարդ էր, գեղեցիկ, բախտը ժպտում էր նրա երեսին մինչև այդ ժամանակ: Նա հաւատացած էր, որ այդ բախտը նրան երբէք չի դաւաճանիլ, և յանդուգն կերպով երջանկութիւն էր պահանջում իր ճակատագրից ապագայում:

Նրա հին՝ հօր խորհրդատուներն աշխատում էին համոզել, հասկացնել նրան, որ նա լրջօրէն մտածի առաջիկայ տարւայ մասին, սակայն գինուց և երաժշտութիւնից յոգնած՝ խորհրդատուների փոխարէն նա իր մօտ կանչեց իր ծաղրածուին:

—Պատմիր մեզ համար զւարճալի հե-
քիաթներ, ասաց արքան:

Ծաղրածուն մի թեթև հայեացք ձգեց
իր շուրջը և, գիշտով ցնցելով իր գլուխը՝
սկսեց.

«Ջոտլանդիայում կար մի հին ամրոց:
Նա ամուր և անմատչելի էր: Ջոտլանդա-
ցիք զուր էին կողոպտում շրջակայ երկիրը,
զուր նրանց «Սեւ» մականւանեալ Դուզլաս
գօրավարը ձեռք չէր վերցնում մօտակայ
անտառից.—Բօքսբուրգ ամրոցը անմատչե-
լի էր, ինչպէս ժայռը ծովում: Դուզլասի
անունը սարսափ էր ազդում ամբողջ Անգ-
լիայում, սակայն ամրոցի բնակիչները մի-
անգամայն հանգիստ էին:

«Մի անգամ ամրոցարնակ կանանցից
մէկը զուրս եկաւ աշտարակի վրայ՝ արևի
մուտքը դիտելու և հիանալու: Նստելով
ժայռի վրայ՝ նա օրօրում էր իր երեխային
և երգ ասում: Նրա առաջ տարածւած էր
դաշտը, հեռաստանում ներհում էր անտառը,
ուր պէտք է որ Դուզլասի գօրքերը թաք-
նուած լինէին: Եւ գետը, անցնելով ծառերի
միջով, տեղ-տեղ փայլում էր արևի ոսկի
ճառագայթներից:

«Սարի տակ, հեռում, մի ինչ որ շար-
ժում կար»:

«Կինը ձայն տուց պահապան զինու-
բին,— թէ, արդեօք, թշնամին է այն, որ
շարժում է այնտեղ՝ դիմացը:

«—Դրանք ազարակատէրերի ոչխարնե-
րն են,—պատասխանեց զինուորը, և հան-
գիստ շարունակեց իր քայլածքը հրապա-
րակի վրայ:

«Արևը մայր մտաւ, սկսեց մթնել: Կի-
նը օրօրում էր երեխային և երգում:

Յօր եմ ասում, մանուկ իմ անգին,
Քնիր հանդարտիկ, իմ ազիզ բալաս.
Դիւերը դաւժում սնում է քամին,—
Եւ քաջամա սիկ գօրավար Դուզլաս
Քեզ ու ինձ համար, օ՛, այստեղ չի՛ գալ,
Պատի քամակից նա մեզ ձեռք չի տալ:

«—Իսկ դու, գեղեցկուհի, հաստատ հա-
ւատացած ես այդ բանում,—լու էց հէնց նրա
ականջի տակ մի ձայն և ծանր ձեռքը՝ եր-
կաթէ ձեռնոցով իջաւ նրա ուսի վրայ:

«Կինը յետ նայեց.—տեսաւ սևազրահ
Դուզլասին իր առաջը կանգնած»:

—Դէ, այդ հեքիաթ է,—ասաց արքան.

—տխուր բաներ են հին խորհրդատուների խրատները:—Ջւարճանանք, իմ բարեկամներ. —բախտը չի համարձակելի Դուզլասին մեզ մօտ ուղարկել:

Տարին անցաւ: Արքան, որ այնքան ջերմաջերմ հաւատացած էր իր բախտի, իր ճակատագրի անդաւաճանութեան վերաբերմամբ, — Նոս-Տարուն այժմ դիմաւորում էր... գերութեան մէջ:

Նա ապրում էր Նորմանդիայի մի խուլ ամրոցում:

Մոռացութեան տւին նրան իր բարեկամները, նախարարները դաւաճանեցին, և նա ծերացաւ վշտի ու անբախտութեան վիճակի մէջ:—Նա վհատութիւնից հոգեմաշ էր եղել:

Նստած է նա ծովի մօտ՝ ամրոցում, և լսում է, թէ ինչպէս ծովը ազմկում է իր ալիքներով, ծփում, և ձկնկուլները ձայներ են հանում նրա ափին:

Նրա մօտ մնաց միայն իր հաւատարիմ ծաղրածուն:

Արքան սկսեց խնդրել, որ նա նորից առասպելներ պատմէ:

Ծաղրածուն մի ըոպէ մտածեց և ապա սկսեց պատմել:

«Դանիայում կար Հառայլդ անունով մի քաջ և ուժեղ ասպետ: Նա ինքը մեն-մենակ կարող էր դիմագրել մի ամբողջ խումբ թըշնամիների, կամ բարձրանալ և մտնել մի անմատչելի ամրոց: Նրա մասին պատմում էին, որ Դանիայում շատ սակաւ են պատահում այդպիսի քաջեր: Մի պառաւ գնչուհի Հառայլդին գուշակեց, որ նրա բախտը — դիմակի սակն է: Եւ այնուհետեւ, ուր էլ որ լինէր, իր բախտի մասին արտայայտած միտքը ամենուրեք հալածում էր նրան: Նա պատերազմի է եղել գնացած՝ Սուրբ-Երկիրը՝ անհաւատների ղէմ կուելու: Պատահում է, որ երբ պառկած է լինում իր վրանի մէջ և դիտելիս է եղել հեռուն՝ անսպասու, — յանկարծ, ջրհորի վրայ, արմաւենիների տակ՝ մի կին սկսել է փայլել, ձեռքին մի սափոր, իսկ ղէմքը՝ սև քօղով ծածկած: Տեղից ցատկում է Հառայլդը, թւում է նրան, որ այդ իր բախտն է, և վազում է ղէպի ջրհորը:— Բայց ոչ ոք չըկայ. իր շուրջը ամեն ինչ հանդարտ է, արմաւենիները խաղաղ նիւրհում են ջրհորի վրայ, իսկ անսպասու ամեն ինչ՝

թէ օդը, թէ երկինքը և թէ զեօտինը,—բոլորն էլ մուայլ են, անտանելի և ծածկւած տխրութեան քօղով:

«Հառայլըը գնում է իր հայրենի տեղերով: Ձին յամբընթաց ոտք է կոխում անտառային ճանապարհի վրայ: Տերևախիտ կաղնիները խոնարհեցնում են իրանց ճիւղերը... Յանկարծ՝ հեռաստանում անցնում է մի ջահիլ կին, ցնցոտիներ հագած, կարծես ազրատ լինէր, և Հառայլդին տեսնելուն պէս՝ թաքցնում է իր դէմքը: Նա թաքնւեց, և միայն տերևախիտ ծառերի խորամանկ ճիւղերն էին, որ փսփսում էին միմեանց հետ խորհրդաւոր շշուկներով:

«Հառայլըը մի անգամ զնացել էր պարահանդէս:

«Երաժշտութիւնը դորդում էր, իսկ ասպետները՝ թաւշեայ և մետաքսեայ հագուստներով պճնւած՝ պարում էին զիմակաւոր կանանց հետ: Մանկլաւիկները նրանց զանազան խմիչքներ էին հրամմեցէք անում:

«Հառայլըը տեսնում է մի զեղեցկուհի: Նրա ճկուն մէջքը սեղմւած է կապտագոյն հագուստով, կրծքի և ձեռքերի վրայ շողշո-



ղում են թանկագին բացուցիկ դէմքին՝ սև զիմակ ունի ծածկած:

«Հառայլըը մօտենում է նրան. կինն ուրախութեամբ համաձայնում է նրա հետ պարել. բայց ասպետը զգում է, թէ ինչպէս նրա ձեռքերը այրում են իրան, և թէ ինչպէս արիւնը իր երակներում հետզհետէ բողբոջւում է, որպէս մի կրակ:

«Իա նա է, վճռում է իր մտքում Հառայլըը:

«Նա նրան առաջնորդում է մի առանձին սենեակ:

«—Ես զիտեմ,—ասում է նա,—որ դու իմ բախտն ես. հանիր զիմակը:

«Երկար խնդրում էր Հառայլըը նրանից, սակայն ի գուր... Այն ժամանակ՝ ուժով պոկում է նա զիմակը նրա դէմքից... Այդ բոպէին ճրագը հանգչում է: Լուսնի դժգոյն լոյսը հագիւ էր սենեակը լուսաւորում:

Ծաղրածուն կանգ առաւ:

— Իսկ ինչ կար զիմակի տակը,— հարցրեց արքան:

— Ոչինչ. հէնց որ նրա ևրեսից զիմակը պոկեց՝ չքնաղ զեղեցկուհու շորերը գետին թափւեցին, և երևաց, որ նրա մէջ

1002
5142

դատարկութիւն էր տիրում, միայն դատարկութիւն — և ուրիշ ոչինչ:

— Այն, այդպէս է աշխարհային երջանկութիւնը, համաձայնեց արքան և ազատ շունչ քաշեց:



Դ Ա Տ Ա Վ Ճ Ի Ռ

(Հրեական լեզբերգ)



ասը զաւակների հայր, բարելոնացի մի մարդ, մեռնելիս ներկայ եղողներին յայտնեց իր վերջին կամբը, ասելով, որ իր բոլոր տասը որդիներից միայն մէկին է ժառանգ ճանաչում և այդ պատճառով էլ միայն նրան է ժառանգութիւն թողնում իր կարողութիւնը:

Նոր էր արտասանել այս խօսքերը, — որ նա ուժասպառ եղաւ, և իր խօսքը զեռ

չըլրացրած՝ մեղապարտ հոգին Աստծուն աւանդեց:

Հէնց որ այդ տարօրինակ մարդու աճիւնը հոգին յանձնեցին, հօր ժառանգութեան վերաբերեալ որդիների մէջ ահագին տարաձայնութիւն ծագեց, և նրանցից ամեն միսն ապացուցանում էր, որ միայն ինքն է օրինական ժառանգը:

Դատը յանձնեցին վճռելու իմաստուն Ռաբբի Բնօյին, որը հռչակած էր իր օրէնսգիտութեամբ, խորիմաստութեամբ և անաշառութեամբ:

Երկար մտածելուց յետոյ, լսելով թեկնածուների ապացոյցները և ոչ մի ելք չըգտնելով՝ օրէնքն այս տարօրինակ վէճի հետ համաձայնեցնելու, Ռաբբի-Բնօյն ասաց նրանց.

— Միայն և միայն հանգուցեալը կարող է լուծել այդ անբացատրելի գաղտնիքը և ահա դրա միակ ելքը. — զինւեցէք ինչով ուզում էք, գնացէք գերեզմանատուն, և այնքան ծեծեցէք ձեր հօր դագաղը, մինչև որ ասէ թէ ումն է պատկանում ժառանգութիւնը: Իմ ծառաները կըհետևեն ձեզ, որպէս զի վկայ լինին թէ ինչ կըբառբառէ

ձեր հայրը դագաղի միջից և ումը կանւանէ իր օրինական ժառանգը:

Թեթևսօլիկները դուրս եկան Ռաբբու մօտից:

Գալով գերեզմանատուն՝ նրանցից ինն հոգի սնապաշտական կուրութեամբ սկսեցին ամենայն եռանդով հարւածել անզգայ շիրիմը, միմեանց հակառակելով, որպէս զի մահակների, փայտերի և ցցակոյտերի հարւածներով ապացուցանեն իրանց իրաւունքների օրինականութիւնը: Իսկ նա, ով իր կենդանութեան ժամանակ չըկարողացաւ լրացնել իր խօսքը, դագաղում ևս լուռ ու մունջ էր:

Այս իրարանցման ամբողջ ընթացքում, որդիներից միայն մէկը, կրտսերը, որդիական սիրոյ բնածին անկեղծ զգացմունքից դրդւած՝ չէր վստահանում խախտել բնութեան օրէնքը և անպատել հօր դագաղն այդպիսի ստոր արարքով. նա կանգնած էր անկիւնում և նրա զայրոյթն արտայայտում էր աչքերից թափւող այրող արցունքների հեղեղատով:

Ջուր տեղն իրանց ոյժերը հայրական դագաղը հայհոյելու վրայ սպառելով, բոլորն

էլ վերադարձան Ռաբբի-Բնօյի տունը:

Ծառաները գերեզմանատանը պատահածի և տեսածի մասին տեղեկացրին նրան:

Այնժամ Ռաբբի-Բնօյը, ներշնչւած, երկնային ուրախութեան փայլով համակւած, գրկեց կրտսերին և համբուրեց նրա գլուխը, որից յետոյ անմիջապէս՝ ցնծալի ձայնով արտասանեց հետևեալ խօսքերը.

—Միայն դ՛ու ես հօրդ օրինական դաւակը, միայն քեզ է պատկանում հայրական ժառանգութիւնը: Աշմարիտ է ասում ս. Գիրքը, թէ «սիրիւ ծնողներիդ, եւ դու բախսաւոր կըլիցես»:



ՀՐԱՇԱԼԻ ԳԻՏՈՒԹԻՒՆ

(Հին գրոցներից)

— Իրելի արքայազն, յուսով եմ, որ այսօր դուք իմ դասին աւելի մեծ ուշադրութիւն կը դարձնէք, քան անում էք այդ սովորաբար:

Այսպէս ասում էր Մուստրիգօ ծերունի պրօֆէսորը, դառնալով իր աշակերտ երիտասարդ արքայազն Ադայլգօին:

Բայց արքայազնը գիտնական պրօֆէսորի խօսքերին ուշք չէր դարձնում և շարունակում էր խաղալ իր թուլթակի հետ, ստիպելով այդ թուլթակին՝ «բոլոր մառդիկ յիմարներ են» տարօրինակ խօսքերն արտասանելու:

Արքայազն Ադայլգօն խիստ ծոյլ էր: Նա հէնց մանուկ հասակից ունեցել էր

տասնեակ ուսուցիչներ, որոնց յանձնարարւած էր արքայազնին բոլոր գիտութիւնների հետ ծանօթացնելու, բոլոր ուսմունքների մասին հասկացողութիւն տալու գործը:

— Արքայազն Ադայլգօն ժամանակով լինելու է մի մեծ պետութեան իշխանակալը, — ասում էր արքայազնի հայրը ուսուցիչներին դառնալով — և այդ պատճառով պիտի գիտենայ սովորական մահկանացուներից աւելի շատ բան. նա պիտի գիտենայ բոլորը. այլապէս, ինչպէս կարող է վճռել բազմաթիւ և զանազանագոյն հարցեր, որոնք վերաբերում են կեանքի այլ և այլ կողմերին, հպատակների կենցաղավարութեանը և տէրութեան երջանկութեանը: Ումը շատ է տրւած, նրանից շատ է պահանջուում. աչքի առաջ ունենալով այս, սովորեցրէք իմ որդուն այն ամենը, ինչ բան որ օգտուէտ է նրա համար:

Ուսուցիչները խոնարհ գլուխ էին տալիս և խոստանում էին նւիրել իրանց ոյժերն ու իրանց ամբողջ գիտութիւնն արքայազնին, նրան ամեն բանի հետ ծանօթացնելու համար, որովհետև նա պիտի գի-

տենար ամենայն բան, որպէս մեծ տէրութեան ապագայ իշխանակալ:

Սակայն—աւանդ—չանցաւ մի տարի, ուսուցիչները մէկը միւսի յետեից սկսեցին հրաժարել արքայազնի հետ պարապելուց, զանգատելով այն մասին, որ արքայազնը բոլոր առարկաները համարում է ձանձրալի բաներ, և ոչ միայն չէ ուզում սովորել, այլ նոյն իսկ լսել չէ կամենում իր ուսուցիչներին:

Միւսներից աւելի երկար մնաց իր տեղում ծերունի պրօֆէսոր Մուստրիգօն: Նա վճռեց որ և է կերպով բժշկել արքայազնին ծուլութիւնից, և աշխատում էր գրաւել նրա ուշադրութիւնը հնար եղածին չափ հետաքրքրելի պարզաբանութիւններով: Այնուամենայնիւ, Մուստրիգօի ջանքերը ոչ մի արդիւնք չունեցան. արքայազնը շարունակում էր ծուլութիւն անել և դասերի ժամանակ աւելի լաւ էր համարում իր թութակի հետ խաղալ, քան լսել ուսուցչին:

—Արքայազն,— բարձր ձայնով շարունակեց Մուստրիգօն.— ունեցէք համբերութեան գէթ մի կաթիլ: Այն գիտութիւնը, որ կամենում եմ ձեզ ընծայարեբել, աշ-

խարհիս ամենավսեմ գիտութիւնն է. նա հայելի է ժողովրդների կենցաղավարութեան և գործունէութեան, նա տախտակ է յայտնութիւնների և կանոնների. կտակ՝ նախորդներից յաջորդների համար թողած. լրացում, մեկնութիւն՝ ներկայի, և օրինակ՝ ապագայի...

Այս հանդիսաւոր կերպով արտասանւած խօսքերը կարծես ներգործեցին արքայազնի վրայ. նա դէն ձգեց ձեռնափայտիկը, որով խաղում էր թութակի հետ, քշեց իր սիրելիին աթոռի յենակից և աչքերը տնկեց ծերունի պրօֆէսորի դէմքին:

—Ինչպիսի գիտութիւն է այդ գիտութիւնը, — հարցրեց նա, Մուստրիգօյին դառնալով:

—Այդ գիտութիւնը՝ պատմութիւնն է, — պատասխանեց Մուստրիգօն:

—Իսկ նրանից ինչ օգուտ: Ի՞նչ կարիք կայ այդ բանը սովորելու:

—Ի՞նչ կարիք... Օ՛, արքայազն, տէրութեան կառավարիչներն ու օրէնսդիրները գործում են պատմութեան համաձայն և նրա էջերի վրայ նայում են այնպէս, ինչպէս ծովագնացները ծովի քարտէզների վրայ:

Մարդկային իմաստութիւնը կարիք ունի փորձառութեան, իսկ կեանքը՝ կարճ ժամանակեայ է: Անհրաժեշտ է գիտենալ, թէ սկզբներում խռովարար կրքերն ինչպէս էին ալեկոծու քաղաքացիական հասարակութեանը, և ինչպիսի միջոցներով խելքի, մտքի բարեբեր գորութիւնը սանձահարում էր նրանց փոթորկալից ձգտումն ու կատաղութիւնը, որպէսզի կարգ սահմանեն, մարդկանց շահերը միացնեն և ընծայեն նրանց՝ երկրիս վրայ հնարաւոր երջանկութիւնը:

—Նշանակում է այդ գիտութիւնը բացառապէս տէրութեան կառավարիչների և օրէնսդիրների համար է սահմանուած:

—Ո՛չ, արքայազն, այդ գիտութիւնն ամենի համար է. թէ թագաւորների և ժողովրդների, թէ զինուորականների և խաղաղ քաղաքացիների, թէ հարուստների և թէ աղքատների համար: Հասարակ քաղաքացին պատմութիւնը պիտի կարգայ նոյնպէս, ինչպէս և երկրի կառավարիչները. նա հաշտեցնում է թէ մէկին և թէ միւսին՝ իրերի ակնյայտի կարգաւորութեան թերութեան հետ, ինչպէս բոլոր դարերում տեղի ունեցած երեւոյթների հետ. հանգստացնում, մխիթարում

է տէրութեան թշառութիւնների ժամանակ, վկայելով, որ առաջ էլ եղել են այդպիսի բաներ, եղել են աւելի սարսափելի, և տէրութիւնը չէր կործանուում. նա կրթում է բարոյական զգացմունքը և իր արդար դատաստանով կարգաւորում է հոգին դէպի ճշմարտութիւնը, վերջինս չլ հաստատում է մեր բարիքը և հասարակութեան համաձայնութիւնը: Ահա օգուտը: Որքան բաւականութիւններ սրտի և մտքի համար... Պատմութիւնը բաց է անում զագահները, բարձրացնում է մեռածներին, նրանց սրտին՝ կեանք և շրթունքներին՝ խօսքեր ներշնչելով՝ նա մեր երևակայութեանը ներկայացնում է մի շարք դարեր, իրանց կրքերի, բարքերի և գործերի հետ միատեղ. նրա ստեղծագործական ոյժով մենք ապրում ենք բոլոր ժամանակներին մարդկանց հետ, տեսնում և լսում ենք նրանց, սիրում և ատում ենք...

—Պրօֆէսոր, —բացականչեց արքայազնը, —ես կամենում եմ ծանօթանալ այդ հրաշալի գիտութեան հետ...

Պալատում բոլորն էլ զարմանում էին,

նկատելով, որ արքայազնը դադարեց խաղերին և զւարճութիւններին մասնակցելուց. բայց զեռ երկնք ժամանակ ոչ ոք չէր ուզում հաւատալ, որ արքայազնը այնպէս յափշտակեց իր հետաքրքիր գիտութիւնով, որ սկսեց օր ու գիշեր գրքերի հետ անցկացնել, աշխատելով, հին ուսուցչի առաջնորդութեամբ, գիտենալ, իմանալ անցած դարերի գաղտնիքները, նշանաւոր հերոսների մեծագործութիւնները, կառավարիչների կեանքը և ժողովրդների կենցաղը. Աւելի և աւելի թափանցելով պատմութեան մէջ, արքայազնը հետաքրքրեց և ուրիշ գիտութիւններով, որոնք մօտիկ կապ ունէին նրա հետ, և սկսեց նրանց ուսումնասիրել, որպէս զի և՛ ս աւելի լաւ ըմբռնի պատմութիւնը: Այդպիսով, արքայազնի հայրը կարողացաւ հասնել իր նպատակին. ապագայ իշխանակալը սովորեց, հին պրօֆէսորի առաջնորդութեամբ իւրօցրեց այն բոլորը, ինչ որ հարկաւոր էր նրան գիտենալ:



ԱՐԵՒ ՈՒ ՀՈՒՍԻՍ

(Հրեական լեգենդա)

Ո՛վ չընաղ արարած, վախիր նախանձից: Նախանձը հրեշտակներին երկընքից դահավէժ արեց. նա խաւարեցրեց գիշերւայ պայծառ դէմքը — արծաթափայլ լուսնին:

Անսկզբնական խորհրդից լսեց արարչական ձայնը. «Թող երկու լուսատուներ՝ որպէս սրանչելիք ապագայ ժամանակների՝ ծագեն երկնականարի վրայ, և ինչպէս երկու թագաւորներ՝ իշխեն երկրի վրայ»: Ասաց և եղաւ:

Ծագեց արեւը — առաջին լուսատուն, ինչպէս մի փեսայ, որ առաւօտեան թողնում է իր առագաստը, և ինչպէս մի հերոս, որ ուրիշ ձգտում է փառքի ուղին հասնել. ահա՛ ճիշտ այդպէս ծագեց նա, աստուածային շողերով զգեստաւորւած: Ծիա-

ծանի գոյներից հիւսած պսակը նրա գլուխն էր զարգարում. երկիրը ցնծում էր. խոտերն անուշահոտութիւն տարածեցին և ծաղիկները բացեցին նրան զիմաւորելու համար:

Միւս լուսատուն վհատութեամբ զիտում էր այս ամենը, նախանձելով, որ իր փայլովը չէ կարող գերազանցել փառահեղ արեւին:

— Ի՞նչու համար են երկու հրամանատարներ մի գահի վրայ բազմած, — շշնջում էր նա ինքնիրան. — ինչու ինձ վիճակած է լինել երկրորդը, և ո՞չ առաջինը:

Եւ յանկարծ նրա պայծառ լոյսը, դուրս մղւած ներքին վրդովմունքից, անհետացաւ. հեռու կորաւ անսասման տարածութեան մէջ ու ցրիւ եկաւ բիւրաւոր աստղերի վերածուելով:

Լուսինը, մահւան գունատութեամբ ծածկւած, ամօթահար կանգնած էր բոլոր երկնային ստեղծագործութիւնների առաջ և դառն արցունք էր թափում:

— Ներիր ինձ, ո՞վ Արարիչ Աստուած, ներիր:

Եւ Աստծու հրեշտակը խաւարած լուս-

նի դէմն ելաւ. նա արտասանեց յաւիտենական ճակատագրի խօսքերը.

— Գու նախանձեցիր արեւին նրա պայծառ լոյսի և առաջնութեան համար, ուստի այդ պատճառով էլ այսուհետև դու կը փայլես նրա լոյսով, և երբ այնտեղ, ներքեում գտնուող երկնասլաց երկիրը կը ծածկէ քեզ, դրանից քո դէմքը կը մռայլի, ինչպէս որ այժմս է և խաւարով կը ծածկի. բայց և այնպէս՝ մի լար, ով մոլորեալ զաւակ. ամենաողորմած Արարիչը ներեց քեզ քո յանցանքը և դարձրեց այն բարիք: «Գնա՛, — ասաց նա, — սփոփանջ ներշնչիր զղջացողներին և քո փայլը թող որպէս բալասան լինի նրանց համար, մի բալասան, որ սփոփէ վշտացածներին և թարմացնող նոր ոյժ տայ այն ամենին, որոնք նւաղած կը լինին արեւի կիզիչ ճառագայթներից:

Տխրամած լուսինն այս խօսքերից սիրտ առած՝ իր սնից շաղ տւեց իսկ և իսկ այն փայլը, որով պճնւում է նա մինչև այժմ, և գիշերւայ թագուհին. աստղերի զօրաբանակի առաջնորդն իր խաղաղ ընթացքն սկսեց, և շարունակում է նոյնը մինչև այսօր: Իր մեղքը ողբալով նա փնտրում է ի-

րան կազդուրող ու մխիթարող առարկաներ:
 Ո՛վ չքնաղ արարած, վախի՛ր նա-
 խանձից: Նախանձը հրեշտակներին եր-
 կընքից գահաւէժ արեց. նա խաւարեցրեց
 գիշերւայ պայծառ դէմքը—արծաթափայլ
 լուսնին:



Գրան. տա

« Ազգային գրադարան



NL0310297

Հոյս են տեսել մեր աշխատասիրած

1. Մեղաւորը (սպառւած) . . . 5 կ.
2. Նոր-փնջիկ (սակաւաթիւ) . . . 5 »
3. Փոքրիկ ընթերցարան (սակաւաթ.) 5 »
4. Փոքրիկ գրոյցներ (սպառւած) . . . 10 »
5. Կնոջ վեճժը (Կ. Մենդեսի) . . . 3 »
6. Կնոջ գաղտնիքը (Մ. Սերափ) . . . 3 »
7. Մայրը (Վ. Հիւզօի) և ուրիշ զրոյցներ 7 »

Փումարով զնոդներին 30% զեղջ. նա-
նապարհածախար նրանց վրայ: Դիմել՝
ТИФЛИСЪ, (Пушкинскій пассажъ)
Геворкու Бабурыанцу.



Նուտով լոյս կրտսնեն

1. Նապոնական հեփարներ (պատկերազ.)
2. Օձ կիներ (Թարգմանութիւն):